

ՏԱՍՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):
Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԵԿՈՂ 1888 ԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔՆՆԱՔԱՆԱԿԱՆ ԼՐԱԿԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, Նոյն դիրքով և Նոյն պրոգրամայով: Մենք կը ստանանք սեփական
ՀԵՌՈՒՄԻՆԻՆԵՐ:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարվանը 6 ռուբլի:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրագույն և Բազմաբնույթ Վարձարարական Կոմիտէի մէջ):
Կայանքներն ուրիշ քաղաքներէ «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է ղրկել հետևեալ հաս-
ցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK»:
Առաջիկայ տարվայ «ՄՇԱԿ» պրոգրամը նոյնը կը լինի, այսինքն I. Առաջնորդող յօդուած-
ներ. II. Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ընդհանուր յօդուածներ (հասարակական, դատաստանական, անու-
սական և այլն) Թղթակցութիւններ, լուրեր. III. Կառավարչական կարգադրութիւններ. IV. ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ընդհանուր յօդուածներ, Թղթակցութիւններ, լուրեր. V. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. VI. ՀԵՌՈՒՄ-
ԳԻՐՆԵՐ. VII. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ֆելիետոններ, ճանապարհորդութիւններ, ազգայրական,
ուսումնական յօդուածներ, վէպեր և այլն. VIII. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:
Յայտարարութիւններ ընդունվում են ամեն լեզուներով: Վճարը՝ բառին 2 կոպեկ: Տալն անդա-
մից աւելի տպւոյ յայտարարութեան համար նշանաւոր գինով կը լինի:
Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր զարգացումը և հասարակական կարծիքը.—
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պանդուխտ հոգևորական-
ներ. Տնտեսական օրական հարցեր. Նամակ Ա-
լեքսանդրապոլից. Նամակ Ալաշքալաթից. Նամակ
Վարանա-Բազալից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մարտահարկերը բարձրացնելու խնդ-
րերը. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌՈՒՄ-
ԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՄԵՐ ԳՐՈՐԶՆԵՐԸ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐ- ԾԻՔԸ

Այսօրվայ կօնցերը Թիֆլիսի ժողովա-
րանում յօդուած Թիֆլիսի Նորաշէնի Մարկա-
մեան ուսումնարանի, ակամայ դարձեցնում
է մեր մէջ հետևեալ խորհրդածութիւն-
ները:

Մեզանում շատ անգամ լինում են թա-
րօնական ներկայացուցիչներ, կօնցերներ,
պարահանդէսներ այլ և այլ բարեգործա-
կան նպատակներով, օրինակ յօդուած ընկե-
րութիւնների և այլն, լինում են և նուիրա-
տուութիւններ յօդուած նոյն հիմնարկու-
թիւնների,—բայց շատ հազիւ է պատա-
հում որ նոյն հիմնարկութիւնները տար-
վայ վերջը հաշիւ տալին հասարակութեա-
նը իրանց կուսակալի մասին, կամ առհա-
սարակ իրանց դրութեան մասին: Այդպի-
սով չէ պահանջում մշտական բարոյական
կապ մեր այլ և այլ հաստատութիւնների
և հասարակութեան մէջ, և վերջ ի վերջոյ
հասարակութիւնը դադարում է հետաքը-
րելի իր հասարակաց հաստատութիւննե-
րով, գրեթէ կատարելապէս մոռանալով
իրանց դրութեան անգամ:

Հասարակութեան մէջ վառ պահելու
համար մշտական համակրութիւնը դէպի
մեր զարգացական հաստատութիւնները, ա-
ւելորդ չէր լինի թէ այդ վերջինները, ու-
րոնք սովորած են ամբողջ Անդրկովկասում,
ամեն տարի մանրամասն հաշիւ տալին
հասարակութեանը իրանց կուսակալի մա-
սին, իրանց ուսումնական տարվայ դործու-
նէութեան մասին, ինչպէս այդ անուամբ են
պետական զարգացումը և անէին այդ հրա-
պարակապէս՝ լրագրողների կամ առանձին
բրօշուրների միջոցով:

Այդպիսով հասարակութեան և մեր
զարգացական հաստատութիւնների մէջ ե-
ղած մշտական բարոյական կապը չէր կազմի,
հասարակութիւնը մոռացութեան չէր տալ
իր ծխական և թմրական զարգացումը դո-
յութիւնը, աւելի համակրութիւն կը պահ-
պանվէր հասարակութեան մէջ դէպի այդ
հաստատութիւնները, ուրեմն մեր զարգաց-

ների հոգաբարձութիւնները աւելի էլ յոյս
կարող էին դնել հասարակութեան նիւթա-
կան օգնութեան վրա:

Հասարակական գործը առաջ տանելու
համար չէ կարելի արհամարհել հասարա-
կաց կարծիքը, ինչպէս որ այդ անուամբ են
մեր բարեգործական, ուսումնական և դրա-
րական հաստատութիւնների մեծ մասը,
ինչպէս որ այդ անուամբ են և մեր եկեղե-
ցիների և վանքերի երեցփոխութիւնները:
Ժամանակ է որ հասարակութիւնը իր բո-
ւոր հոգաբարձական հաստատութիւններին,
այն բոլոր հաստատութիւններին, որոնք
ազգի փողով են պահպանվում—խստա-
թեամբ պահանջի իւրաքանչիւր տարի
ճիշդ և մանրամասն հաշիւներ սկսած էջ-
միածին վանքից մինչև վերջին մատուած և
վերջին ծխական զարգացում:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՆԴՈՒՄՏ ՀՈԳԵՐՈՐԴԱԿԱՆՆԵՐ

Պանդուխտութեան հոսանքը մեր գիւղացիներին
տանում է մեծ քաղաքները,—ահա այն
իրողութիւնը, որ այսօր կատարվում է ամենքի
աչիւ առաջ: Գիւղական ազգայնականութեան ամե-
նաթափում օգնելը մաշվում են թէ ֆելիկսպէս և
թէ բարոյական քաղաքների խղճող և ապակա-
նող անկիւններում,—ահա այն դառն հետևանքը,
որը այսօր ծանրանում է մեր գիւղական դասա-
կարգի վրա: Այդ, ի հարկէ, անպայման վտան-
գաւոր և ցաւալի է: Բայց աւելի ցաւալի է այն,
որ տնտեսապէս տանջվող և պանդուխտութեան ո-
գով վարակված գիւղացու հետ միասին դէպի քա-
ղաք է դնում նոյն իսկ այն տարրը, որը իրօք
շատ ամուր կապերով պէտք է կապված լինի
գիւղական ժողովրդի հետ, որը նոյն իսկ շատերի
կարծիքով, պէտք է ղրկվէր պանդուխտութեան
դարձանայտուն: Գրեթէ գիւղական շրջանի հոգևորա-
կաններ են:

Անկասկած շատերին պատահած կը լինի մեծ
քաղաքներում տեսնել զանազան գիւղերից կամ
վանքերից եկած քահանաներ և վարդապետներ,
որոնք քաղաքների մէջ ամեն տեսակ միջոցների
են դիմում փող վաստակելու համար, որոնք թող-
նելով իրանց յանձնած ժողովուրդը, և քաղաքներ
գալով՝ մի եկեղեցուց միւս եկեղեցին են անց-
նում և համարեա թէ ողորմութիւն ինքնելով փող
են հաւաքում, և շատ անգամ էլ չը ղրկանալով
քաղաքային կեանքի հոսանքին, սկսում են ամե-
նախաժողովար կեանք վարել: Այս րօպէին մանա-
ւանդ թիւրբաց Հայաստանի հոգևորականութիւնը

վարակված է այդ պանդուխտութեան ախտով, և
Հայաստանի ամեն կողմերից ամեն կարգի հոգե-
ւորականներ, քահանաներ և վարդապետներ լըց-
նում են Պոլսի հայոց եկեղեցիները և նոյն իսկ
փողոցները և մութ չաչի խանաները ու
զանազան խաները...

Այդ, ի հարկէ, մի աննկելի վարմունք է, որ
նկատվում է հոգևորական դասակարգի մէջ, ո-
րոնք տնտեսական այնպիսի պայմանների մէջ են
դրված և այնպիսի յարաբերութիւններ ունեն
դէպի ժողովուրդը, որ չեն կարող արդարանալ
թէ իրանց պանդուխտութիւնը ունի յարգելի և
հիմնական պատճառներ, բացի պանդուխտութեան
այն անիծեալ ողբից, որով իրանք վարակվել են:

Գա մի անընդունալիս իրողութիւն է, որ
կրկնապէս կարող է տնտեսական ամբողջ
մէջ պանդուխտութեան ողբին, որի վրա միշտ մեծ
տպաւորութիւն է թողնում նոյն իսկ ամենատը-
գէտ հոգևորականի աչք կամ այն վարմունքը, դա
մի կրկնապէս ցաւալի իրողութիւն է, քանի որ
այդպիսով համարեա թէ միմանց ետեից ոչնչա-
նում են այն բարոյական կապերը, որոնցով գիւ-
ղացին կապված է իր հայրենի, բնիկ երկրի հետ,
և հետևապէս ոչնչալ բարոյական զգացմունքներով
կապված չը լինելով իր հայրենի երկրի հետ, նա
գնում է այնտեղ, որտեղ նա յոյս ունի մի փոքր
թեթեւանալ քաղաքում ու իւր իւր և պարտե-
րից:

Սկզբներում այդ տղեղ և վնասակար երևոյթի
վրա ոչինչ ուշադրութիւն չը դարձրեց հոգևոր
վարչութիւնը, որը խստութեամբ կարող էր
դորան առաջն առնել, և ահա այսօր պան-
դուխտ հոգևորականների թիւը շատ մեծացել է,
և մինչդեռ մի կողմից կ. Պոլսը լցվել է այնպի-
սի վարդապետներով, քահանաներով և նոյն իսկ
եպիսկոպոսներով, միւս կողմից Հայաստանի դա-
ւաւանքը քիչ քիչ դատարկվում են հոգևորական-
ներից: Քաղաքներում այդ պանդուխտ հոգևորա-
կանների դրութիւնը, ինչպէս վերև էլ յիշեցինք,
շատ ողբամիտ է, մանաւանդ նրանց դրութիւնը,
որոնք տեղ չեն գտնում եկեղեցիներում, և այդ-
պիսով առիթ են ունենում թէ նոյն իսկ ողոր-
մութիւն հաւաքել, և թէ անվայել կեանք վարել:
Գիւղ չէ պատահում, օրինակի համար, Պոլսի լրա-
գրիչներում կարգալ թէ ինչպէս այնտեղի պան-
դուխտ հոգևորականները մուրացկանութիւն են
անում, կամ թէ մոռացած իրանց պաշտօնը և
կոչումը՝ սկսում են վարել ամենամանկայն կեանք:
Այդ պատճառով, միանգամայն դժուր է, որ
Պոլսի հայոց ազգային վարչութիւնը մի շարք մի-
ջոցներ է ձեռք առել հոգևորականների պանդու-
տութեան առաջն առնելու համար: Կրօնական
ժողովը ուղարկել է շրջաբերականներ դաւառա-
կան ժողովներին, որ ամեն միջոց դործ դնեն և
թող չը տան որ քահանաները կամ վարդապետ-
ները իրանց ծովը կամ վանքերը թողնելով, գը-
նան զանազան քաղաքներ, յայտնելով մի և նոյն
ժամանակ, որ Պոլսի եկող հոգևորականները
պատրիարքարանից կամ որ և է ազգային հիմ-
նարկութիւնից որ և է նպաստ չը պէտք է ստա-
նան: Կրօնական ժողովը մինչև անգամ առաջա-
դրում է դաւառական ժողովներին և առաջնորդ-
ներին այդ նպատակի համար, հարկաւոր եղած
ժամանակը ղրկել տեղական մարմնաւոր իշխա-
նութեանը, և արգելը դնել որ հոգևորականները
առանց յարգելի պատճառների հեռանան իրանց
նշանակած տեղերից:

Կարելի է յուսալ, որ ազգային վարչութիւնը
իր նպատակին հասած կը լինի, եթէ ուշադրու-
թեամբ հակի հոգևորականների պանդուխտ դա-
տարկելի վրա: Անկասկած հոգևոր վարչութիւնը
մի շարք դրական և խիստ միջոցներ ձեռք առ-
նելով, կարող կը լինի վերջ տալ այդ տղեղ երե-
ւոյթին, որը ամենալատ օրինակ է լինում ա-
ռանց այն էլ պանդուխտութեան ախտով վարակ-
ված ժողովրդի համար: Այս դէպքում խիստ մի-
ջոցներ ղրկելով միանգամայն ներքի է, որովհե-
տե եթէ այդ հոգևոր հայրերից չենք կարող սպա-

սել, որ նրանք արգելք լինեն պանդուխտութեանը
և լաւ օրինակ տան ժողովրդին, միթէ չենք կա-
րող պահանջել, որ նրանք գէթ վատ օրինակ չը
տան:

Խ. Մ.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Հացահատիկների ուղարկվելը դէպի Երևան շա-
րունակվում է տակաւին, մինչև այսօր ուղարկ-
ված է մօտաւորապէս 48,000 պուդ: Վերջին տե-
ղեկութիւններից երևում է որ դոնէ Երևանում
հացի գինը սկսել է մի քանի օր իջնել, բայց և
այնպէս ցորենի և դարու այս րօպէին եղած ար-
ժէքը եռապատիկ աւելի թանկ է անցեալ տարի-
ներից. և այդ գների աննշան պակասելուն ա-
ռիթ է տուել միանգամայն այս կողմերից ուղարկ-
ված հացահատիկի այդ ահագին քանակութիւնը:
Ինչ էլ ուղում են ամեն, Երևանի քահանայը այս
տարի հացի զգալի պակասութիւն կունենայ. բայց
դրանից էլ աւելի թանկութիւն չի լինի, որովհե-
տե Վարաբաղի հացը այս տարի բաւական առատ
է, իսկ տեղափոխումը դէպի Երևան այնքան էլ
դժուար չէ:

Ալեքսանդրապոլից առ այժմ ոչ մի շարժում
չը կայ. հացահատիկներ այդտեղից չեն ստաց-
վում արդէն վեց ամիս է. և ոչ էլ ուղարկվում են
այս կողմից դէպի այդ տեղերը: Ուղարկեցին,
բայց աննշան քանակութիւն. երևի Ալեքսանդրա-
պոլի նահանգը դոնէ անցեալ տարվանից ունեցել
է այնքան պաշար, որ առայժմ ուրիշ տեղերից
կարօտութիւն չունի ստանալու մինչև առաջին
հունիսը:

Երևանից սկսել է նշանաւոր քանակութեամբ
չամիչ ուղարկվել դէպի Օդէսա. ընթացիկ ամ-
սում արտահանվել է մօտաւորապէս 17,000 պուդ
այդ ապրանքից:

Երևանի հարուստներից մէկի, պ. Սարաջեանի,
անուամբ նորերում ուղարկվեցաւ այստեղից 400
պուդանոց մի կաթնալ, իր ուրիշ սարքերով:
Պատմում են որ այդ մարդը ղեկավարութիւն ու-
նի բանալ Երևանում սպիւրտի գործարան, այնտե-
ղի օղիներից սպիւրտ պատրաստելու:

Գինեգործութիւնը Գանձակում և մանաւանդ
Երևանում ամեն տարի աւելի և աւելի սկսում է
զարգանալ. իւրաքանչիւր տարվայ արտահանու-
թիւնը անհամեմատ առաւելութեամբ դերազան-
ցում է միւս տարիներից: Այս տարվան գինիների
առաջին պարտիաները սկսեցին արդէն ստացվել:
Ուղարկողները զանազան ֆիրմաներ են. ամենից
շատ ուղարկում է Թայրիւնայ, որ վերջին տա-
րում պատրաստել է Երևանում մի ընդարձակ
գործարան: Գինիները զլխաւորապէս ուղարկվում
են Օդէսա, մասամբ վարչալիս և ուրիշ քաղաք-
ներ:

Ա. Ա.

ՆԱՄԱԿ ԱՆԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ

Նոյեմբերի 25-ին

Արհեստագիտական դպրոցի կարևորութիւնը,
որի մասին խօսեցինք անցեալ յօդուածում, աւե-
լի շօշափելի կացութեանը համար, այս անգամ
մի փոքր աւելի երկար կանգ առնենք Ալեքսան-
դրապոլի կրթական-մտաւոր դրութեան վրա:
Ալեքսանդրապոլը, որպէս նորաշէն քաղաք և տա-
րեկ երկրների ժողովրդեան զաղթական ազգա-
բնակութիւն, մտաւոր կողմից, ի հարկէ այնքան
առաջ էլ չէր կարող գնալ, բայց և այնպէս, Ան-
դրկովկասի մնացեալ քաղաքներից էլ յետ չէ մը-
նացել նա կրթական գործի մէջ:

Ալեքսանդրապոլը ունի դաւառական դպրոց,
օրիորդական պրօդինալիս, և հայոց երկսեռ
զարգացում իրանց բաժանմունքներով:

Սրանից մի քանի տարի առաջ Ալեքսանդրա-
պոլի մէջ հակա թէ կարելի լինէր պատահել գը-
րագէտներին, բոլոր պաշտօնականները, ուսուցչա-
կան խումբը, քաղաքային ատենաների ծառայող-

ԱՐԴՈՒՆԻՆԻՑ մեզ գրում են: «Նոյեմբերի 9-ին Արդուին ժամանեց թեմական առաջնորդ գերա-
Արխիստակե: Արքեպիսկոպոս Աթաղիայի և Արքե-
հանի ճանապարհով էր եկել: Տեղիս հայ ժողովը
զի մեծ բազմութիւն, որի հետ միացած և հայ
կաթօլիկները երկու պատուական հոգևորական-
ներով, իրանց հետ ունեցած իրանց ժողովրդի ա-
ռաջատար անձինքներէն բաղկացած մի խումբ
հանդիսաւոր կերպով ընդունեցին սրբազանին
Ամբ բազմութիւն, քաղաքից մինչև Թորգոմ գիւ-
ղը, մօտ 15 վերստ հեռու, սրբազանին ընդառա-
ջնաց: Յովհաննէս քահանայ Եսայան մի ատեն
հարանաւթեամբ հնորաւորեց սրբազանի դառուս-
թուն, իսկ ինքն առաջնորդ մի գեղեցիկ քարո-
խօսքի, և խորին հնորակալութիւնս յայանցից
մենքին, թէ հայ-լուսաւորչականներն և թէ հայ
կաթօլիկներն այն սիրալիք ընդունելութեան հա-
մար, որ ցոյց տուեց նրան Արդուինի հայ աղգա-
բնակութիւնը: Այստեղ դալով սրբազանին առա-
ջին և զլիսաւոր գործը եղաւ եկեղեցական հին
խճճված հաշիւները մաքրել, որոնք մնացել էին
15—20 տարուց ի վեր չը քննած ու չը մաքր-
ված: Արքեպիսկոպոս խորհուրդներ տուեց ժողովրդի
նորեք երկսեռ զաւրոցներ քանաւոր մասին, որոն-
մինչև այժմ, երեք տարի շարունակ, զոց էին
Արքեպիսկոպոս այստեղի եկեղեցում պատարագ մա-
տուցեց և պատարագի ժամանակ եկեղեցին կը
սով չափ լի էր և հայ-կաթօլիկներով: Արքեպիսկո-
պոս իր քարոզի մէջ ասեց թէ ամեն հայ պէտք
յարգի ուրիշ հայի, իր եղբոր կրօնը, լուսաւորչա-
կան հալը պէտք է յարգի կաթօլիկ հայի կրօնը
իսկ կաթօլիկ հայը պէտք է յարգի լուսաւորչա-
կան հայի կրօնը և երկուսն էլ միմեանց վերա-
բերվին որպէս եղբայրներ և չը պէտք է միմեան-
տունը քայտն: Նոյեմբերի վերջերին սրբազան

այստեղից մեկնեցաւ զէպի Բաթում, տեղիս ժողովուրդը օրհնելուց յետոյ։

«Հիւսիսային գործակալութիւնը» հաղորդում է, որ Սարատով-Սիմբիւրսկի բանկի գործի առիթով սենատը որոշեց, աչքի առաջ ունենալով Մոսկվայի դատատանական պալատի պրօկուրօրի բողոքը և քաղաքացիական պահանջողներին դատարանը, արդարացիորդ վճիռը բոլոր մեղադրվածներին վերաբերմամբ, 801—804 և 808—816 յօդուածներին խախտելու պատճառով, ոչնչացնել և գործը յանձնել Մոսկվայի նահանգական դատարանը, նորից քննելու համար։

«Հիւսիսային գործակալութիւնը» հեռագրում է մեղ հետեւալը։ «С. Петерб. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որպէս լուր, որ այն նահանգներում, որտեղ մտցնված են զէնստովօի հիմնարկութիւնները, ենթադրութիւն կայ ոչնչացնել հաշտարար դատարաններին համար ընտրողական սկզբունքը, թողարկելով արդարադատութեան միջնորդին, ներքին գործերի միջնորդին հետ համաձայնութեամբ, նշանակել հաշտարար դատարաններին պաշտօնի վրա բարձրագոյն իրաւաբանական կըրթութիւն ստացած անձանց, մի և նոյն ժամանակ առաւելութիւն տալով տեղական կալուածատէրերին։

Ստացանք պ. Պարոնեզեզանից նրա նոր հեղինակած երկու երաժշտական գրութիւններ. 1) մի կադրիլ «Родные Звукы» վերնագրով, որ կազմված է տեղական հայոց և վրաց եղանակներից և 2) մի սօլօ-մադրիկա «Ручеёк» վերնագրով։ Պէտք է խոստովանվել որ պ. Պարոնեզեզան շատ արդիւնաբեր գրող է։

ԱՍՍԱՅԻՍԱՅԻՑ մեղ գրում են։ «Այսօր նոյեմբերի 30-ին հրդեհ յայտնվեցաւ քաղաքում. այրվում էր մի աղքատի տունը։ Անհնարին էր փրկել այրվող փոքրիկ տնակի միջից նրա պառաւ բնակչուհին. բոլոր շրջապատել էր տնակը ժողովուրդը յուսահատված աղաղակներով էր ջուր բերել, հրաշէջ գործիքներ բերել։ Վերջը, երբ ոստիկանութիւնը բախելով քաղաքային վարչութեան ազնւոտի դուռը, ստիպեց դուրս բերել հրաշէջ գործիքները, յայտնվեցաւ որ մեր քաղաքային վարչութեան հրաշէջ բոլոր գործիքները բաղկացած էին մի քանի փոքրիկ ձեռքի-տակառներից, երեք հատ կեռից և վեց հատ ստապարից... Բարեբաղդաբար, այրվող տունը փողոցի անկիւնի տուն լինելով, քամի էլ այդ օրը չը լինելով, կարելի եղաւ սահմանափակել հրդեհը միմիայն այդ տնակով, փրկելով հարևան տները։ Սարսափելի էր տեսարանը, երբ դուրս քաշեցին հողի տակից վերակելի մէջ խանձված և խեղդված պառաւին։ Մեր քաղաքի տներին մեծամասնութիւնը հողակտուր են։»

Լուում ենք, որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձու պ. Մէլքե-Վարդգէսեան իշմիածնի սինօղի կարգադրութեամբ հրաժարեցնելով է հոգաբարձական պաշտօնից։ Սինօղի այգայիսի մի խիստ կարգադրութեան պատճառը համարում են այն հանգամանքը, որ վերջին ժամանակները սինօղի և հոգաբարձութեան մէջ ինչ ինչ հարցերի վերաբերութեամբ զրադրութիւն է եղել և այդ զրադրութեան մէջ պ. Մէլքե-Վարդգէսեան խիստ լեղում է գործածել սինօղի հասցէին։

ԳԱՆՁԱԿԻՑ մեղ գրում են, որ նոյեմբերի 25-ին սիրողները բարեգործական նպատակով մի ներկայացում տուցին, որի մուտքը եղել է մօտաւորապէս 195 ռուբլի, իսկ ծախսը 40 ռուբլի։

ԹԻՖԼԻՍԻ թեմի առաջնորդ Արիստակէս եպիսկոպոսը, թեմի մէջ արած իր ճանապարհորդութիւնից յետոյ՝ այս քանի օրերս արդէն վերադարձաւ Թիֆլիս։

Լուում ենք, որ իշմիածնի մէջ վերջապէս հասկացել են հայոց դպրոցների համար մի նոր և աւելի մշակված ծրագիր կազմելու կարեւորութիւնը, քանի որ այն ծրագիրը, որը այժմ տարածված է ամեն տեղ, այնքան անորոշ և անմշակ է, որ առաջ է բերում դպրոցների թէ վարչական և թէ ուսումնական մասի մէջ տարաձայնութիւններ։ Նոր ծրագիր կազմելու համար շատ լաւ կը լինէր, որ իշմիածնի ուսումնական մասնաժողովին անդամները ուղարկութեան առէին դպրոցական հիմնարկութիւնների կարծիքները։

«С. Петерб. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ կառավարչական բարձր շրջաններում վերջնականապէս վճռված է Տուրկեստանի, Ամուրեան, և Անդրկասպեան երկրներին կառավարչապետների վարչական իրաւունքները նշանաւոր կերպով ընդարձակել, իսկ Ֆինանսական գործողութիւնները այդ երկրներում կը շարունակի վարել Ֆինանսների միւնիստրութիւնը իր ներկայացուցիչների միջնորդութեամբ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՔՍԱՀԱՐԿԵՐԸ ԲԱՐՁՐԱՅՆԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ

Ներկայումս եւրօպական պետութիւններից շատերը տնտեսագիտական այնպիսի դիրք են բռնել, որով ոչ թէ միայն չի անցնի այն տնտեսական ճգնաժամը, որը այս րօպէիս ծանրանում է ամբողջ Եւրօպայի վրա, այլ և աւելի ծանր հետեւանքներ կարող է առաջ բերել։ Պատերազմական տրամադրութիւնը չէ անցնում ամբողջ Եւրօպայի մակերեսով, և զինուորական այն բոլոր օրինադրեր և նախապատրաստութիւնները, որոնք երևան եկան վերջին միջոցներում, միանգամայն խախտել են և շարունակում են խախտել շատ պետութիւնների ներքին արդիւնաբերութեան, և առևտրի կանոնաւոր դարձումն հիմքերը։ Միջազգային այժման յարաբերութիւնները աւելի սաստկացնում են այդ ճգնաժամը, և եթէ այդ լարված յարաբերութիւնների չնորհիւ պետութիւնները իրանց դրբերը պատերազմի դաշտը չեն դուրս բերում, դրա փոխարէն մի կատաղի տնտեսական պատերազմ է մղվում, որի ապագայը կարող է լինել այն, որ անդադար մեծացնում են զանազան տեսակ միջոցների և նրկթեղի մաքսաւորները, և այդպիսով այժմ Եւրօպայում սկսված է մաքսաւորների մի կատաղի արշաւանք, զուգէ աւելի վտանգաւոր, քան թէ նոյն իսկ պատերազմական արշաւանքը։ Եւ այդ բանի մէջ պետութիւնները մէկը միւսից յետ չեն մնում։

Գերմանական կառավարութիւնը վաղուց արդէն ամեն միջոց գործ է դնում մեծացնելու ներմուծվող ապրանքների արժեքները, այժմ հերթը հասել է ցորենի և առհասարակ հացահատիկների մաքսաւորելը շատացնելուն, որի մասին անդադար հեռագիրը բերում է արդէն հարկաւոր տեղեկութիւնները։ Պրօտէկցիօնիզմի ոգին տարածվել է նոյնպէս և Ֆրանսիայում, Իտալիայում, Սլոնիայում, մասնաւոր Պորտուգալիայում և շատ ուրիշ տեղերում։ Ազատ առևտրի սկզբունքը արդէն ոտի տակ է տրված Եւրօպայում, և դիւլօմատիան ակնաւ չը դնելով տնտեսագիտութեան ամենազօրեղ պահանջներին, փորձում է զարգացնել ներքին արդիւնաբերութիւնը և առևտուրը պրօտէկցիօնիզմով միայն, որի ապարդիւն լինելը արդէն վաղուց ապացուցված ճշմարտութիւն է համարվում։ Մի պետութիւն մաքսաւորկերով արդեւ է դնում միւս երկրի արդիւնքների ներմուծելուն, և ահա վերջինս էլ իր կողմից աւելի մեծ և աւելի զգալի մաքսաւորկերով յետ է ընտել հարևան երկրի ապրանքները։ Այս է ահա Եւրօպայի այժման ամենատարածված առևտրական քաղաքականութիւնը, որին չէ հետեւում համարեա միմիայն Անգլիան, որտեղ ազատ վաճառականութեան սկզբունքը բաւական խոր արմատներ է գցել նոյն իսկ կառավարչական շրջաններում, և տեղի չէ տալիս հոմանշան ուրիշ սիստեմաներին։ Այդ քայլը գուցէ առաջ է դրել մի փոքր ծանր կը լինի Անգլիայի համար, որի դէմ սկսված է մաքսաւորկերի արշաւանք բոլոր պետութիւնների կողմից, բայց Մեծ-Բրիտանիայի կառավարութիւնը բոլորովին տրամադրել է միջոցաւոր ազգաբնակչութեան շահերը դրսև մի փոքրիկ խումբ ձեռնարկողների շահերին, որոնց համար շատ ձեռնտու կը լինի անկասկած հովանաւորող սիստեմաների գործադրութիւնը։

Անկասկած այս տնտեսական վտանգաւոր քաղաքականութեան պատճառներից շատերը կայանում են միջազգային լարված յարաբերութիւններից, և հէնց այդ տեսակետից նայելով հարցի վերա, չէ կարելի չը ցանկանալ, որ միանգամայն ոչնչանային այդ բոլոր դիւլօմատիական խառնաշփոթութիւնները, որոնք այդպիսի ծանր և վտանգաւոր դրութեան մէջ են գրել ամբողջ Եւրօպան։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Ի նկատի ունենալով վիշնայում տեղի ունեցող զինուորական խորհուրդները, նոյն իսկ առևտրիացոց կայսրի նախագահութեամբ Բերլինի լրագիրները այն միտքն են յայտնում, որ առևտրական յարաբերութիւնները բաւական լարված են և ծանր հետեւանք կարող են ունենալ։

— Արտասահմանեան մի քանի լրագիրներ հաղորդում են, որ Սլոնիան ևս միացաւ երեք մեծ պետութիւնների դաշնակցութեանը։

— Սօֆիայում լուրեր են տարածվել, որ իբր թէ բոլղարական նշանաւոր գործիչներ՝ Նաչեվիչ և Ստօիլով հրաժարվում են իրանց պաշտօններից։

— Բէլգրադից հեռագրում են հետեւալ հետաքրքիր լուրը։ Արմատականները պահանջում են, որ մահուան պատիժը վերացվի և մահուան պատիժը թող իրի միմիայն պատերազմական ժամանակաւ սկուպչիւնայի վճռով, մի և նոյն ժամանակ տալ թագաւորին իրաւունք՝ որ նա իր ցանկացած դէպքում ազատութիւն չնորհի քաղաքական յանցաւորներին։

— Սան-Բէթից եկած տեղեկութիւններից երեւում է, որ գերմանական թագաւորանի կոկորդի ուղեցրը պակասել է։

— «Tribuna» լրագիրը խօսելով երեք պետութիւնների դաշնակցութեան մասին, այն միտքն է յայտնում, որ այդ դաշնակցութիւնը փոխանակ խաղաղութիւնը ամրապնդելու կարող է կարճ միջոցում պատերազմի առիթ տալ։

— Փարիզի «Le Moniteur des petits Capitaux» շաբաթաթերթի մէջ տպված է Արմենո-Յունա-Լատին միութեան տարեկան խնջոյքի նկարագրութիւնը, որից երևում է, որ այդ խնջոյքի մէջ մի քանի ճառեր են խոսացվել թիւրքաց Հայաստանի դրութեան մասին։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Սպանիայի մէկ ու կէս տարեկան թագաւորը Ալֆօնս XIII, արդէն ոտք է դրել իր արքայական գործունէութեան ասպարիւրում։ Նորերում Մադրիդում Կորտեսի բացման ժամանակ ներկայ էր մանուկ-թագաւորը, թագուհի-մայրը բերեց մասնուկ-թագաւորին և նստացող նրան դահի վրա, երեսնա շատ հանգիստ կերպով նստեց դահի վրա՝ դահական ճառի ամբողջ ընթերցանութեան ժամանակ։ Այդ բանը սպանիացիների կարծիքով նշանակում է, որ գուցէ մանուկ Ալֆօնսը կը հետեւի խաղաղ քաղաքականութեան հեռու ապագայում։

Նորերում Զիլիպոլսում մեռաւ մի 19 տարեկան օրիորդ շատ դարմանալի պատճառով։ Ընդհանրապէս օրիորդը շատ առողջ էր և ունէր դիմացկուն կազմուածք. բայց վերջին միջոցներում նա զգում էր ինչ որ մի ցաւ իր ստամոքսի մէջ։ Այդ ստամոքսային ցաւը այնպիսի տարօրինակ կերպով էր զգացվում, որ բժիշկները չէին կարող զանում բացատրել պատճառները։ Վերջին օրերում օրիորդը սկսեց խիստ միտնել և այն միջոցին նրա բերանից վար ընկաւ մի կրիւս։ Ամենքը ուրախացան կարծելով, որ ստամոքսի ցաւի պատճառը կրիւսն է եղել, և ուրեմն այժմ օրիորդը միանգամայն կառողջանայ։ Բայց տարաբաղդաբար կրիւսի դուրս գալուց յետոյ օրիորդի բաղդաբար անդամները սկսեցին ուռչել և նա միւս օրը մեռաւ։ Բժիշկները կարծում են, որ օրիորդը ջուր խմելիս կրիւս է տուել կրիւսի ձու, որից և ստամոքսում դուրս է եկել կրիւսն։

Բրիտանական հռչակաւոր մուղէյը ստացաւ մի հետաքրքիր ընձայ. դա եկվորական մի թագուհու գահն է, որը շինված է եղել 1600 տարի առաջ Բրիտանոսի ծննդից։

Երեսիլ զորք ծիւլ վէրն այս օրերս Բրիտանիայում մի անաղղութեան հանդիպեց—մի արիստօկրատական կուրուստ նա փորձեց կարգաւ մի վերին աստիճանի անհետաքրքիր և տխուր մանկական հերթաթիւ։ Վէրն սկսեց այսպէս, տիկիններ և պարոններ, երեսակայեցեք որ դուք այժմ եօթն տարեկան էք։ Ոչ որ այդ բանը երևակայել չը կարողացաւ և չանցաւ նոյն իսկ 1/4 ժամի դահիճը միանգամայն դատարկվեց։

ՄՇԱԿԻ ՀՆՈԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՏՈՒՍԱՅԻՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ԲՆԼԻՒՆ, 3 դեկտեմբերի։ Բնխստաղ ձայների հաղին մեծամասնութեամբ հաւանութիւն տուեց հաճախ վրա մաքսաւորի դնելուն այն չափով, ինչ չափով որ որոշված էր կառավարչական օրինագծի մէջ, այն է երեք մարկ, զրանից յետոյ

հաւանութիւն գտան, կառավարչական օրինագծի համաձայն, սե ցորենի մաքսահարկը—2 մարկ, սիմիդրը—3 մարկ, և դարին—2 1/4 մարկ։ Զիլիպոլսի օրիորդների մաքսահարկի աւելացնելը, որը նախագծված է կառավարութեան կողմից, ձայների ահաղին մեծամասնութեամբ մերժվեց։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 դեկտեմբերի «Правит. Вѣстник»-ի մէջ հրատարակված է հետեւալը. «Նոյեմբերի 22-ին, Մոսկվայում, Վերականգնիլի կուրի» դահիճում, չբաւոր ուսանողների օգտին տրվող կօնցէրտի ժամանակ, իրաւաբանական ֆակուլտէտի երրորդ կուրսի ուսանող Սինեալսկի, այն միջոցին, երբ ուսանողների տեսուչը անցնում էր կողքի դահիճներից մէկով, ետեւից մօտեցաւ և խփեց նրան։ Սինեալսկի տեղն ու տեղը ձեռքաւարկեցաւ Այդ կուրսի վարմունքը պէտք է որ խիստ պայծառ զայրոյթ պատճառէր, բայց, տարաբաղդաբար, ուսանողների մի մասը, որը սկզբում փոքրաթիւ էր, համակրութեամբ վերաբերեց զէպի ընկերոջ այդ անարժան վարմունքը, և զորովմով այնպիսի անձինքների կողմից, որոնք միշտ և ամեն տեղ խառնաշփոթութիւններ են որոնում, մտադրեց ժողով կազմել համալսարանի բակում, երեքաթիւ օր, նոյեմբերի 24-ին։ Գնեւրալ-նահանգապետ անհրաժեշտ միջոցներ ձեռք առաւ. հին համալսարանի շինութեան մօտ հաւաքված բազմութիւնը, մօտ 800 մարդ, որը բաղկացած էր մեծ մասամբ համալսարանի ուսանողներից, միւս բարձրագոյն դպրոցների մի քանի ուսանողներից և անգործ ականատեսներից, իր ժամանակին արդեւ ճիշդ հանդիպեց, համալսարանի դռները փակեցին և աւագ-սօլիցիմէյստերը համոզում էր հաւաքված մարդկանց ցրվել։ Ամբողջ իրան հանգիստ էր պահում, բայց չէր ցրվում Այն ժամանակ հարկի կօղակներ կանկեցան և կանգնեցին բաւական հեռու Դրանից յետոյ հրաւիրեցին վերջ տալ արդեւ ժողովին, որը և անմիջապէս իրազօրծվեցաւ։ Մի և նոյն ժամանակ, համալսարանում ուսանողներին նշանաւոր մեծամասնութիւնը միանգամայն խաղաղ կերպով շարունակում էր լսել պրօֆէսորների դասախօսութիւնը, և միայն մօտ 200 հոգի ինքնակամ կերպով ընդհատեցին իրանց պարապմունքները և դուրս եկան համալսարանի բակի ժողով կազմելու համար։ Համալսարանի ընկաւորը նրանց կանչեց ակտի դահիճը. նրանք սկզբում աղմկայեց կերպով պահանջեցին փոխել տեսչին և անպատիժ թողնել իրանց վարմունքը. բայց երբ ուսումնարանական շրջանի հոգաբարձուն կտրական կերպով յայտնեց, որ խաղաղութիւնը խանգարելը անպատիժ մնալ չէ կարող, և որ պատժի ատուհանը կանխված էր լինի նրանց ապագայ վարմունքից, այն ժամանակ նրանք ենթարկվեցան հոգաբարձուի հրաւերին, որով նա պահանջում էր հեռանալ համալսարանից, թողնելով իրանց ստուակները բեկտօրի մօտ։ Պէտք էր կարծել, որ հիմք չունեցող այդ խառնակութիւնը կը դադարի, բայց զրգված ամբարշտ ընկերների կողմից, ուսանողների նոյն մասը միւս օրը նորից փորձեց ժողով կազմել համալսարանի կլինիկայի մօտ Բօժ-դեստիլնայայ փողոցի վրա և 26-ին Նարիչիկնայի կողմից տեղում, Եկատերինեան հիւանդանոցի մօտ, որտեղ պարապում էին 5-որդ կուրսի բժիշկ-ուսանողները, որոնք չէին մասնակցում այդ անմիա շարժման մէջ։ Բօժդեստիլնայայ կը լինիկայի մօտ արած փորձերին կարելի եղաւ վերջ տալ անարգել կերպով. իսկ Եկատերինեան հիւանդանոցի մօտ դուռնակում ժողովը, հաւաքվածները դիմադրութեան պատճառով, հարկ եղաւ ցրվել ժանդարմների և ոստիկանութեան միջոցով, բայց ոչ զքի հաշմութիւն և ծանր վէրք չը պատճառեցին, ի նկատի ունենալով որ խառնակութիւնները չեն դադարում, գնեւրալ-նահանգապետը անհրաժեշտ համարեց անմիջապէս ձեռքաւարել և ուղարկել իրանց հայրենիքը կամ ծնողների բնակութեան տեղերը այն ուսանողներին, որոնք սկզբից արդէն ուղարկվում էին զրաւել իրանց անբարեմտութեամբ, և որոնք ներկայ դէպքում ընկերների վրա վնասակար ազդեցութիւն էին ունեցել։ Համալսարանի վարչութիւնն էլ իր կողմից արտաքին 27 ուսանող, որոնք ուրիշներին զրգում էին և ներկայ էին լինում բոլոր ենթադրված ժողովներում։ Արտաքրված ուսանողներին ձեռքաւարեցին և հեռացրին մայրաքաղաքից։ Գնեւրալ-նահանգապետը, դեռ հինգաթիւ օր, նոյեմբերի 26-ին, օգտաւոր համարեց ժամանակաւորապէս դադարեցնել համալսարանական պարապմունքները, բայց համալսարանական վարչութիւնից ձեռք տեղեկութիւն ստա-

